
ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱՆԵՐԻ ԴԵՐԸ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ՍՏԵՓԱՆՅԱՆ Ա. Ս.

Անցումը շուկայական հարաբերություններին իր ազդեցությունն ունեցավ տնտեսության բոլոր ոլորտների վրա: Այդ փոփոխությունները տարածվեցին նաև ապրանքային շուկայի վրա, որի բաղկացուցիչ մասն են ապրանքային բորսաները: Ապրանքային բորսաները գործուն դեր ունեն ժամանակակից շուկայական տնտեսության մեջ՝ ապրանքների ձեռքբերումը և իրացումը կազմակերպելու գործում: Նրանց գործունեության հիմնական նպատակը բորսային առևտրի կազմակերպումը և կարգավորումն է: Յուրաքանչյուր երկրում բորսան, լինելով շուկայի անհրաժեշտ տարրը, պետք է զարգանա շուկայական տնտեսության զարգացմանը զուգընթաց: Բնականաբար, զարգացած շուկայական տնտեսություն ունեցող երկրներում խոշորագույն ապրանքային բորսաները, ինչպիսիք են Միջամերիկյան ապրանքային բորսան (MACE), Նյու-Յորքի ապրանքային բորսան (NYMEX), Նյու-Յորքի սուրճի, շաքարի, կակաոյի բորսան (NYCSCE) և այլն, երկար ճանապարհ են անցել զարգացման ներկայիս աստիճանին հասնելու համար: Հայաստանի Հանրապետությունում ևս որոշակի նախադրյալներ են անհրաժեշտ բորսաների զարգացման համար: Ամենից առաջ անհրաժեշտ է ունենալ շուկայական տնտեսության ներկայիս պայմաններին համապատասխան կայուն օրենսդրություն, ապրանքների շրջանառության ընդլայնում՝ ինչպես երկրի սահմաններում, այնպես էլ դրանցից դուրս: Պետք է նկատի ունենալ, որ շուկայական տնտեսության մեջ բորսաները կարևոր դեր են խաղում որպես առևտրի կազմակերպման յուրահատուկ ձև¹: Առանձին հեղինակներ դրանք համարում են տնտեսության հիմքը²:

Բորսաները օժտված են մի շարք առանձնահատկություններով. 1. բորսան իր գործունեությունը իրականացնում է մեծածախ առևտրի ոլորտում, որտեղ կազմակերպում է տարբեր ապրանքների բորսայական առևտուր, 2. առևտուրը անցկացվում է նախապես որոշված տեղում և ժամանակահատվածում, 3. բորսային բնորոշ է առևտրի մասնակիցների հատուկ սուբյեկտային կազմ՝ բորսային միջնորդներ, 4. բորսան ունի առքուվաճառքի յուրահատուկ օբյեկտ՝ բորսայական ապրանք:

¹ Բորսա բառը ծագել է «*de burse*» բառից և բառացիորեն նշանակում է դրամապանակ: Ըստ տարածված վարկածի, Բելգիական Բրյուզզե քաղաքում կար հատուկ հրապարակ, որտեղ հավաքվում էր վաճառականությունը՝ առևտրի համար: Հրապարակը կոչվում էր «*de burse*»՝ Վան դե Բուրսեի մակերային գրասենյակի անվանումով: Վան դե Բուրսեն այնտեղ գտնվող իր տունը տրամադրում էր վաճառականներին, և առևտրի այս ձևն էլ կրում է մինևույն անունը:

² Տե՛ս *Жилинский С. Э., Предпринимательское право, М., 2002, с. 463.*

ՀՀ-ում բորսաների պատմությունը այնքան էլ հարուստ չէ, որքան, օրինակ, Ռուսաստանի կամ Եվրոպայի բորսաներինը: ԽՍՀՄ-ում գործում էին Պետական մատակարարման (Госснаб) մարմինների ցանց և նյութատեխնիկական մատակարարման մեծածախ բազաների համակարգ: ԽՍՀՄ փլուզումից հետո այդ մարմինները դադարեցրեցին իրենց գործունեությունը և դրանցից շատերի հիման վրա սկսեցին ձևավորվել ապրանքային բորսաները: Հայաստանում 1990 թ. նոյեմբերի 22-ին հիմնվեց առաջին՝ «Ադամանդ» ապրանքահումքային բորսան:

Ապրանքային բորսաների իրավական կարգավիճակը սահմանված է «Ապրանքային բորսաների մասին» 1993թ. հուլիսի 20-ի ՀՀ օրենքով³: Ապրանքային բորսաների գործունեության և բորսային առևտրի կազմակերպման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են նաև ՀՀ օրենսդրության այլ ակտերով, ինչպես նաև ապրանքային բորսաների հիմնադիր փաստաթղթերով, բորսային առևտրի կանոններով և այլ ներքին փաստաթղթերով: Պետք է ընդգծել, որ «Ապրանքային բորսաների մասին» օրենքով չեն կարգավորվում աշխատանքի, ֆոնդային բորսաների, ինչպես նաև մասնագիտացված և ունիվերսալ բորսաների ֆոնդային բաժինների և բաժանմունքների գործունեության հետ կապված հարաբերությունները (հոդվ.2):

«Ապրանքային բորսաների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն, ապրանքային բորսան իրավաբանական անձ հանդիսացող ձեռնարկություն է, որն առևտուրն իրականացնում է իր սահմանած կանոններով, որոշակի տեղում և ժամանակահատվածում՝ հրապարակային սակարկությունների ձևով: Օրենքը հստակ սահմանում է ապրանքային բորսայի գործունեության ոլորտը: Բորսան իրավասու է իրականացնել գործունեություն, որը անմիջականորեն կապված է բորսային առևտրի կազմակերպման և կարգավորման հետ: Բորսային առևտրի կազմակերպումը և կարգավորումը կազմում է բորսայի հատուկ իրավասությունը: «Ապրանքային բորսաների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ կետում ընդգծվում է, որ բորսան չի կարող իրականացնել այնպիսի առևտրային, առևտրամիջնորդային և այլ գործունեություն, որն անմիջականորեն կապված չէ բորսային առևտրի կազմակերպման ու կարգավորման հետ: Մասնավորապես, բորսան չի կարող ներդրումներ կատարել, ձեռք բերել այլ կազմակերպությունների բաժնետոմսեր, ունենալ մասնաբաժիններ, ավանդներ ներդնել և այլն, եթե այդ կազմակերպությունները նպատակ չեն հետապնդում իրականացնել գործունեություն, որը անմիջականորեն կապված է բորսայական առևտրի կազմակերպման և կարգավորման հետ, այսինքն՝ թույլատրվում է միայն ստեղծել միություններ (ընկերություններ)՝ օրենքով սահմանված կարգով⁴:

«Ապրանքային բորսաների մասին» ՀՀ օրենքի սույն նորմը սահմանափակում է բորսային գործունեության շրջանակները և արդի շուկայական պայմաններում կրում է արգելակող բնույթ: Եթե բորսան ունի ազատ կապիտալ և ցանկանում է ներդնել արտադրության մեջ, որը շահութաբեր կլինի ոչ

³ Հայաստանի Հանրապետություն, 3.IX.1993:

⁴ См. и Коммерческое право, часть 2, под ред. Попондопуло В. Ф., Яковлевой В. Ф., СПб., 1998, с. 166.

միայն գործարարի համար, այլև կնպաստի տնտեսության բարելավմանը, ապա չպետք է արգելել այն: Դրանով օրենքը ոչ թե նպաստում է բորսային առևտրի զարգացմանը, այլ ընդհակառակը՝ խոչընդոտում է նրա կայացմանը և զարգացմանը, իսկ այդպիսիք խիստ կարևոր են յուրաքանչյուր պետության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության համար: Վերը նշված պահանջներին չհամապատասխանող հիմնարկները և կազմակերպությունները, ինչպես նաև դրանց մասնաճյուղերը և մյուս առանձնացված ստորաբաժանումները իրենց անվանման մեջ «ապրանքային բորսա» տերմինը օգտագործելու, բորսային սակարկություն կազմակերպելու իրավունք չունեն և ենթակա չեն պետական գրանցման այն անվանմամբ, որը ներառում է այդ տերմինը որևէ բառակապակցությամբ⁵:

Բորսաները կարելի է տարանջատել առանձին տեսակների՝ ելնելով տարբեր չափանիշներից: Կախված ապրանքների տեսակներից, որոնցով վարվում է առևտուրը, տարբերվում են բորսաների հետևյալ տեսակները՝ 1. ապրանքային, 2. ֆոնդային, 3. արտարժույթային: Հանդիպում են նաև, այսպես կոչված, խառը բորսաներ (ապրանքաֆոնդային), երբ մի շուկայում միաժամանակ աշխատում են և՛ ապրանքներով, և՛ արժեթղթերով: Երկար ժամանակ, բորսայական օրենսդրության բացակայության պայմաններում, չկար բորսաների դասակարգում ապրանքային, ֆոնդային և արտարժույթային: Այդ իսկ պատճառով ապրանքային բորսաները գործարքներ էին կատարում և՛ ապրանքներով, և՛ արժեթղթերով⁶:

«Ապրանքային բորսաների մասին» ՀՀ օրենքի 4-րդ բաժինը նվիրված է բորսաների գործունեության կարգավորումն իրականացնող պետական լիազորված մարմնի իրավասություններին⁷: Թեև «Ապրանքային բորսաների մասին» ՀՀ օրենքով սահմանված է «պետական լիազորված մարմին» հասկացությունը, սակայն գործնականում նման մարմին չկա և երբեմնից նույնիսկ չի ձևավորվել: Ապրանքային բորսաների գործունեության նկատմամբ այդպիսի մարմնի կամ որ նույնն է՝ պետական հսկողության բացակայությունը կարող է տեղիք տալ բազմաթիվ չարաշահումների, բորսային առևտրի մասնակիցների իրավունքների ոտնահարմանը և բազմապիսի այլ խախտումների: Ապրանքային բորսաների ինքնակամ, չկարգավորված գործունեությունը հաճախակի հանգեցնում է կամայականությունների: Պետական հսկողությունը անհրաժեշտ պայման է ապրանքային բորսաների բարենպաստ գործունեության համար:

Ապրանքային բորսան կազմակերպություն է, որը ձևավորում է մեծածախ առևտրի շուկան՝ բորսային սակարկություններ կազմակերպելու և կարգավորելու միջոցով⁸: Իրենց գործունեության ծավալով և բովանդակությամբ ապրանքային բորսաները միատարր չեն, և դրանք ըստ տեսակների դասակարգելիս հաշվի են

⁵ Տե՛ս «Ապրանքային բորսաների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածը:

⁶ Ֆոնդային բորսաների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» ՀՀ օրենքով՝ ընդունված 2000 թ. հուլիսի 6-ին:

⁷ Տե՛ս «Ապրանքային բորսաների մասին» ՀՀ օրենք, հոդվ. 29:

⁸ Տե՛ս **Жилинский С. Э.**, նշվ. աշխ., էջ 464:

առնվում տարբեր չափանիշներ: Ապրանքային բորսաները իրենց հերթին լինում են՝ 1. ունիվերսալ, 2. մասնագիտացված: Ունիվերսալ բորսաները սակարկությունները անցկացնում են բազմազան ապրանքների լայն ծավալով: Խոշորագույն ունիվերսալ ապրանքային բորսաների թվին են դասվում Չիկագոյի ապրանքային բորսան (Chicago Mercantile Exchange), Նյու-Յորքի բամբակի ապրանքային բորսան (NYCE) և այլն: ՀՀ-ում գործող բորսան ևս ունիվերսալ է: Մասնագիտացված բորսաներում գործարքները կատարվում են որոշակի խումբ ապրանքներով: Լայն մասշտաբի մասնագիտացված ապրանքային բորսաների թվին են դասվում Նյու-Յորքի ապրանքային բորսան, որը կազմակերպում է արծաթի, ոսկու, ալյումինիումի առևտուր, Նյու-Յորքի մեկ այլ ապրանքային բորսան (COMEX), որտեղ կնքում են պլատինի, պալադիումի, դիզելային վառելիքի, բենզինի, պրոպանի, նավթի գործարքներ և այլն: Բորսայի մասնագիտացումը կարող է կախված լինել բազմաթիվ գործոններից, օրինակ, բորսայի ծագման վայրից, անդամների ցանկությունից և այլն:

Ապրանքային բորսայի ստեղծման կարգը և պայմանները գլխավորապես կախված են դրա կազմակերպաիրավական ձևից⁹:

Համաձայն «Ապրանքային բորսաների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի, բորսան ստեղծվում է բաժնետիրական կամ սահմանափակ պատասխանատվության ընկերության ձևով: Այստեղ անհրաժեշտ է մատնանշել, որ Ռուսաստանի Դաշնությունում, ինչպես նաև Եվրոպայի և ԱՄՆ մի շարք երկրներում օրենսդրությունը թույլատրում է օգտագործել իրավաբանական անձի որևէ կազմակերպաիրավական ձև: Որոշ հեղինակներ, ելնելով ապրանքային բորսայի տնտեսական բնույթից և իրավական վիճակից, կարծում են, որ բորսան կարող է ստեղծվել միայն ոչ առևտրային կազմակերպության ձևով: Օրինակ՝ Ի. Ավիլինայի և Օ. Կոզիրի կարծիքով, շահույթ ստանալը բորսայի գործունեության հիմնական նպատակը չէ, թեև նման գործունեությունը կարող է հանդես գալ որպես երկրորդական արդյունք¹⁰: Անկասկած, բորսայի ոչ առևտրային կարգավիճակը զգալիորեն բարձրացնում է նրա հեղինակությունը: Դա թույլ է տալիս իրագործել բորսայի իրական գործառույթը՝ իր անդամների և բորսայական առևտրի այլ մասնակիցների առևտրային գործունեության ապահովումը: Սակայն, ինչպես արդարացիորեն նշում են մի շարք հեղինակներ, այս կամ այն (առևտրային և ոչ առևտրային) կազմակերպաիրավական ձևի ընտրությունը պետք է թողնել բորսային, քանզի գործնականում գրեթե անհնար է տարբերել գործունեության հիմնական նպատակը ոչ հիմնական նպատակից¹¹: Այսպես, օրինակ, բազմաթիվ

⁹ Համաձայն «Ապրանքային բորսաների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի, ապրանքային բորսան իրավաբանական անձ հանդիսացող ձեռնարկություն է: «Ապրանքային բորսաների մասին» ՀՀ օրենքի ընդունման ժամանակ ՀՀ-ում գործում էր 1992թ. մարտի 14-ին ընդունված «Ձեռնարկությունների և ձեռնարկատիրական գործունեության մասին» ՀՀ օրենքը, սակայն 1998թ. մայիսի 5-ին ՀՀ քաղաքացիական օրենսգրքի ընդունմամբ ճանաչվեց ուժը կորցրած: Ուստի, անհրաժեշտ է ճշտել նաև «ձեռնարկություն» տերմինը:

¹⁰ St' u **Авилина И.В., Козырь О. М.**, *Биржа: правовые основы организации и деятельности*, М., 2000, с.26.

¹¹ St' u **Белых В. С., Виниченко С. И.**, *Биржевое право*, М., 2001, с. 12.

ոչ առևտրային կազմակերպություններ ձևականորեն (օրենքով և կանոնադրությամբ) շահույթ ստանալու նպատակ չեն հետապնդում, սակայն փաստացիորեն ձգտում են դրան և հսկայական եկամուտներ են ստանում ձեռնարկատիրական գործունեությունից¹²:

ՀՀ-ում գործող ներկայիս միակ բորսան «Ադամանդ» ապրանքահումքային բորսան է՝ ստեղծված փակ բաժնետիրական ընկերության տեսքով: Հետևաբար, նրա նկատմամբ կիրառվում է նաև «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքը: Բնականաբար, որպես իրավաբանական անձ, ապրանքային բորսան ունի իր կառավարման մարմիններն ու կառուցվածքը: Ապրանքային բորսայի կառուցվածքը որոշվում է նրա գործունեության նպատակներով: Ապրանքային բորսայի շրջանակներում բորսային առևտրի կազմակերպման և կարգավորման համար ստեղծվում են գործառնական ստորաբաժանումներ: Նրանց ցանկը սահմանվում է բորսային առևտրի կանոններով, որոնք մշակվում են յուրաքանչյուր բորսայի կողմից ինքնուրույն և այդ իսկ պատճառով չեն կարող միօրինակ լինել:

Մեր կարծիքով, ապրանքային բորսաները պետք է ստեղծվեն ոչ առևտրային կազմակերպությունների ձևով: Բորսաները պետք է գործեն ոչ թե սոսկ իրենց սեփական շահի, այլ շուկայում առաջարկի և պահանջարկի միջև հարաբերակցությունը վերահսկելու, բորսայական առևտուրը կազմակերպելու համար: Ապրանքային բորսաները պետք է սպասարկեն բորսային առևտրի մասնակիցներին՝ բավարարելով նրանց պահանջմունքները, ինչպես նաև նվազեցնեն ծախսերը բորսայական գործարքներ կնքելիս:

Իրավաբանական անձի կազմակերպատիրավական ձևի տեսանկյունից հետաքրքիր է միջազգային ունիվերսալ «Արևելա-եվրոպական բորսան» (БЕБ), որի անդամները, ըստ կանոնադրության և հիմնադիր պայմանագրի, նրա շահույթից շահաբաժինների տեսքով եկամուտ չեն ստանում: Այս կազմակերպատիրավական ձևի առանձնահատկությունն այն է, որ բորսայի անդամները, ստեղծելով այն որպես կազմակերպությունների միավորում և նրա կանոնադրային կապիտալում կատարելով գույքային ներդրումներ, կորցնում են մասնաբաժնի նկատմամբ իրենց սեփականության իրավունքը: Նրա կանոնադրությունը ուղղակիորեն նախատեսում է, որ կանոնադրային կապիտալը ձևավորվում է ներդրումների հաշվին, որոնք վերադարձման ենթակա չեն¹³. անդամները մեկ բրոքերային տեղի իրավունք են ստանում: Այս առանձնահատկությունը տարբերում է «բորսամիությունը» «բորսա-բաժնետիրական ընկերությունից», որտեղ կատարված ներդրումը միշտ մնում է անդամի սեփականությունը:

«Ապրանքային բորսաների մասին» օրենքի 14-րդ հոդվածի համաձայն, բորսան հիմնադրվում է ՀՀ և օտարերկրյա իրավաբանական և (կամ) ֆիզիկական անձանց կողմից և ենթակա է պետական գրանցման՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Բորսայի հիմնադիրներ չեն կարող լինել՝ 1. պետական իշխանության և կառավարման մարմինները, 2. բանկերը և այլ

¹² Տե՛ս նույն տեղում:

¹³ Տե՛ս **Рутман Л.**, *Правовое регулирование деятельности товарных бирж* (Закон. Комментарии и толкования, М., 2000, с.18).

ֆինանսավարկային կազմակերպությունները, 3. ապահովագրական և ինվեստիցիոն ընկերությունները, 4. հասարակական, հասարակական-քաղաքական, կրոնական և բարեգործական կազմակերպությունները և հիմնադրամները, 5. այն ֆիզիկական անձինք, որոնց ՀՀ օրենսդրությամբ արգելված է զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ:

Քաղաքացիական օրենսգրքի 53-րդ հոդվածի համաձայն, իրավաբանական անձի հիմնադիրները սահմանում են իրավաբանական անձի հիմնադրման համար համատեղ գործունեության կարգը, իրավաբանական անձին իրենց գույքը հանձնելու և նրա կառավարմանը իրենց մասնակցության պայմանները: Ընկերության հիմնադիրները կնքում են ընկերության ստեղծման մասին գրավոր պայմանագիր և այդ պայմանագրի հիման վրա մշակում են ստեղծվող իրավաբանական անձի կանոնադրությունը: Կանոնադրությունը լոկալ նորմատիվ ակտ է, այն ուժի մեջ է մտնում ապրանքային բորսայի պետական գրանցման պահից: Ի տարբերություն Հայաստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնությունում, ինչպես նաև արտասահմանյան մի շարք երկրներում հիմնադիր փաստաթուղթ է համարվում ոչ թե կանոնադրությունը, այլ հիմնադրման պայմանագիրը:

Ապրանքային բորսայի կանոնադրությունը, «Ապրանքային բորսայի մասին» օրենքի 17-րդ հոդվածում նշված դրույթներից բացի, պետք է պարունակի ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, ինչպես նաև «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքով սահմանված՝ կանոնադրությանը վերաբերող դրույթներ: Ապրանքային բորսայի կանոնադրության մեջ վերոհիշյալից բացի, պետք է արտացոլվեն հատուկ դրույթներ, մասնավորապես՝ բորսայի անդամների առավելագույն քանակի, բորսայի անդամների և բորսային առևտրի այլ մասնակիցների իրավունքների և պարտականությունների, բորսային գործարքներով բորսային առևտրի մասնակիցների միջև վեճերի լուծման կարգի մասին և այլն:

Բորսայի գործունեությունը կանոնակարգող կարևորագույն ներքին փաստաթղթեր են նաև բորսայական առևտրի կանոնները, որոնք կարգավորվում են քաղաքացիական օրենսգրքով, ապրանքային բորսաների, գրավի և օրենսդրական այլ ակտերով: ՀՀ-ում գործող միակ՝ ապրանքահումքային բորսայի բորսային առևտրի կանոնները կոչվում են «Երևանի ապրանքահումքային բորսայում ապրանքի և հումքի (թանկարժեք մետաղներ, քարեր և այլ արժեքներ) սակարկությունների կազմակերպման կարգ»: Այն պարունակում է՝ 1. ընդհանուր դրույթներ, 2. սակարկությունների մասնակիցներ, 3. վաճառքի ձևեր, 4. մասնակիցների գործողություններ, 5. սակարկությունների ժամանակ գնային կամ ծավալային կտրուկ փոփոխությունների ընթացքի կարգավորում բորսայի մասնակցությամբ, 6. ֆինանսական հարաբերություններ, 7. գովազդային միջոցներ, 8. գաղտնի տեղեկատվություն, 9. կողմերի պարտավորություններ և պատասխանատվություն:

Ապրանքային բորսան՝ որպես իրավաբանական անձ, ենթակա է սահմանված կարգով պետական գրանցման: Սակայն բորսային առևտուրը կարող

է իրականացվել բորսայում միայն բորսային գործունեություն իրականացնելու համար հատուկ թույլտվություն՝ արտոնագիր ստանալուց հետո: Ըստ «Ապրանքային բորսաների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի, բորսային առևտուրը կազմակերպվում է արտոնագրի առկայության դեպքում, որը տրվում է Հայաստանի Հանրապետության կառավարության պետական լիազորված մարմնի կողմից:

2002 թ. դեկտեմբերի 25-ին ՀՀ նախագահը վավերացրել է ՀՀ կառավարության N 2019 որոշումը «Բորսային (ոչ ֆոնդային) առևտրի կազմակերպման գործունեության լիցենզավորման կարգը և բորսային (ոչ ֆոնդային) առևտրի կազմակերպման գործունեության լիցենզիայի ձևը հաստատելու մասին», որի համաձայն, բորսային (ոչ ֆոնդային) առևտրի կազմակերպման գործունեության արտոնագրման, արտոնագրի գործունեությունը կասեցնելու կամ դադարեցնելու մասին եզրակացություններ տալու նպատակով ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարությունում ստեղծվում է արտոնագրման հանձնաժողով: Ներկա դրությամբ ՀՀ-ում ապրանքային բորսաներին արտոնագիր տրամադրում է ՀՀ առևտրի տնտեսական զարգացման նախարարությունում ստեղծված Ներքին շուկայի պաշտպանության և մրցակցային միջավայրի բարելավման վարչության արտոնագրման հանձնաժողովը: Բորսային (ոչ ֆոնդային) առևտրի կազմակերպման գործունեության իրականացման համար արտոնագրերը տրվում են անժամկետ¹⁴: Կառավարության վերոհիշյալ որոշումը հակասում է «Ապրանքային բորսաների մասին» օրենքի 15-րդ հոդվածին, որի համաձայն, արտոնագիր ստանալու համար ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝ դիմում, հիմնադիր պայմանագիր, բորսային կանոնադրություն և բորսային առևտրի կանոններ: Իսկ կառավարության N 2019 որոշման համաձայն, արտոնագրման համար ներկայացվում են՝ հայտ, իրավաբանական անձի կանոնադրության և պետական գրանցման վկայականի պատճենները, պետական տուրքի վճարման անդորրագիր և տնօրենի կրթության վկայականի պատճենը:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն, ՀՀ կառավարության որոշումները չպետք է հակասեն ՀՀ օրենքներին¹⁵: Թեև կառավարության նման որոշումը բխում էր անհրաժեշտությունից՝ կարգավորել տվյալ ոլորտը, սակայն առաջին հերթին պետք է օրենքը փոփոխվեր կամ նոր օրենք ընդունվեր, որի հիման վրա էլ ընդունվեին կառավարության որոշումներ: Նման անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ օրենքը պետք է համապատասխանի բորսային գործունեությանը և ներկա շուկայական

¹⁴ Մանրամասն տե՛ս 5 դեկտեմբերի 2002 թ., ՀՀ կառավարության N 2019 որոշումը՝ «Բորսային (ոչ ֆոնդային) առևտրի կազմակերպման գործունեության լիցենզավորման կարգը և բորսային (ոչ ֆոնդային) առևտրի կազմակերպման գործունեության լիցենզիայի ձևը հաստատելու մասին»:

¹⁵ Տե՛ս «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, ընդունված 2002 թ., մայիսի 21-ին, 14-րդ հոդված:

պայմաններին, որը ի վիճակի չէ կատարելու գործող «Ապրանքային բորսաների մասին» ՀՀ օրենքը:

Կարծում ենք, բորսային հարաբերությունների զարգացմանը առաջին հերթին խոչընդոտում են «Ապրանքային բորսաների մասին» ՀՀ անկատար օրենքը, ինչպես նաև օրենքների և կառավարության որոշումների միջև եղած հակասությունները:

Դա է պատճառը, որ ՀՀ ապրանքային բորսաների վերաբերյալ օրենսդրությունը չի համապատասխանում շուկայական հարաբերությունների զարգացման արդի պայմաններին և կատարելագործման կարիք ունի: Նոր, զարգացած շուկայական հարաբերություններ թևակոխած Հայաստանի Հանրապետությունում ամենից առաջ անհրաժեշտ է շուկայական տնտեսության ներկայիս պայմաններից բխող օրենսդրություն ստեղծել, որը հնարավորություն կընձեռնի լուծել գործնական նշանակության խնդիրներ:

РОЛЬ ТОВАРНЫХ БИРЖ В РЫНОЧНЫХ ОТНОШЕНИЯХ

СТЕПАНЯН А. С.

Резюме

Товарные биржи играют активную роль в современной рыночной экономике - в организации реализации и приобретения товаров, представляя большой интерес особенно в сфере оптовой торговли. Товарная биржа – это постоянно действующий, организационно оформленный рынок, на котором осуществляется оптовая торговля большими партиями сырьевых и продовольственных товаров, обладающих родовыми признаками и качественной однородностью.

В любой стране, в том числе и в Республике Армения, биржи должны развиваться наряду с развитием рыночной экономики. А для ее успешного развития необходимо стабильное биржевое законодательство, соответствующее нынешним условиям рынка, а также расширение оборота товаров как в стране, так и за ее пределами.